



ԵՂԵԳՆԱԾՈՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 / Հեռ. 055 40 30 18, էլ. փոստ [info\\_veqhegnadzor@aarhus.am](mailto:info_veqhegnadzor@aarhus.am), [narekbeq@yahoo.com](mailto:narekbeq@yahoo.com)

Ե-17/14

5 նոյեմբեր

ՀՀ բնապահպանության նախարար

Արամայիս Գրիգորյանին

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող

Նարեկ Բեգլարյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացված Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով շրջակա միջավայրի, մարդկանց առողջության ու անվտանգության պաշտպանությունը, հասարակության իրազեկության աստիճանի բարձրացումը՝ խնդրում եմ Ձեզ Եղեգնաձորի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական մանրամասն տեղեկատվություն հետևյալի մասին.

2014 թվականի հուլիս-հոկտեմբեր ամիսներին Վայոց ձորի մարզում գործող ՀԷԿ-ներ կատարած ստուգումների քանակի, ստուգումներ կատարված ՀԷԿ-ների անվանումների, արձանագրված խախտումների ու խախտումների համար կայացված որոշումների մասին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Եղեգնաձորի Օրհուս կենտրոնի համակարգող

Նարեկ Բեգլարյան